ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2014 թվականի № 38

«ԽԱՉՓԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ «ԽԱՉՓԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, 24-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին որոշում է.

1.«Խաչփարի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ՓԲԸ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել որպես «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):

2.Հաստատել «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման կարգը, պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի մարման կարգը:

3.Հաստատել «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության գույքի և գույքային իրավունքների՝ «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:

4.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը՝ համաձայն հավելվածի: ?

5.Ընկերության կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփարի գյուղական համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

6.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

7.Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ղեկավարին:

8. «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ընկերության պարտատերերի առկայության դեպքում բոլորին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:

9. Չեղյալ ճանաչել համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 22-ի ««Խաչփարի բուժամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը «Խաչփարի բուժամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու մասին» № 18 որոշումը:

Կողմ(7) Դեմ(0) Չեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզի Խաչփար համայնքի

ավագանու 2014 թ. նոյեմբերի 28-ի № 38 որոշման

ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ՀԱՆՁՆՎՈՂ

հ/հ	Անվանումը	Քանակը /հատ/	Մեկ միավորի հաշվեկշռային արժեքը/դրամ/	Ընդհանուր գումարը /դրամ/	Ծանոթություն
1	Էլեկտրոսրտագին	1	621836	621836	
2	Հիվանդի հետազոտման սեղան	2	61043	122086	
3	Երեխայի բարուրման սեղան	1	65792	65792	
4	Շիրմա	3	63329	189987	
5	Դեղորայքի պահարան	3	136331	408993	
6	Գրասեղան	2	51556	103112	
7	Քարտերի պահարան	1	67467	67467	
8	Պահարան	2	70893	141786	
9	Ջննման սեղան	1	131615	131615	
10	Մոնոկուլյար միկրոսկոպ	1	286021	286021	
11	Սառնարան	1	83564	83564	
12	Ավտոկլավ	1	213907	213907	
13	Համակարգիչ	1	181000	181000	
14	Գրասենյակային աթոռ	4	11500	46000	
15	Դեղորայքի պահարան	1	65000	65000	
16	Գրասեղան	1	40000	40000	
17	Բուժզննման մահճակալ	1	30000	30000	
18	Աթոռ	12	16304	195654	
19	Բժշկական աթոռ	2	73438	146876	
20	Կշեռք մեծահասակների	1	72080	72080	
21	Կշեռք մանկական	1	45992	45992	
22	Մոնոկուլյար միկրոսկոպ	1	301075	301075	
23	Ցենտիֆուգ	1	122368	122368	
24	Լսողության չափման կոմերտոնների հավաքածու	1	128414	128414	
25	Պատվաստումների և դեղորայքի սառնարան	1	89015	89015	
	Ընդամենը			3916640	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ